



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 08/18**

06.08.2018թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**)
խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**),
քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի, 344-րդ հոդվածի
4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Կարինե Հարությունյանը (ներկայացուցիչներ՝ Սարգիս Հովհաննիսյան, Զարուհի Հայրապետյան) (**այսուհետ՝ Դիմող**) 2018 թվականի մարտի 28-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածը, 344-րդ հոդվածի 4-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 1-ին, 10-րդ, 60-րդ հոդվածի, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Գործի դատավարական նախապատմությունը և դիմողի փաստարկները մասնավորապես հանգում են հետևյալին.

Դիմելով ընդհանուր իրավասության դատարան՝ քաղաքացի Կարինե Հարությունյանը պահանջել է ճանաչել իր սեփականության իրավունքը ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մորենիկի թիվ 8 բնակելի տան $\frac{1}{4}$ մասով՝ որպես ծխի անդամ, իրեն ճանաչել որպես ժառանգությունն ընդունած փաստացի տիրապետող ժառանգ՝ Գևորգ Թարվերդյանի՝ ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մորենիկի թիվ 8 բնակելի տան $\frac{1}{4}$ բաժնի $\frac{1}{2}$ մասի նկատմամբ, ինչպես նաև պարտավորեցնել Կադաստրին գրանցել իր՝ որպես կոլտնտեսային ծխի անդամի, նշված անշարժ գույքի $\frac{1}{4}$ մասի նկատմամբ սեփականության իրավունքը և որպես փաստացի տիրապետող՝ հանգուցյալ ամուսնուց ժառանգած բնակելի տան $\frac{1}{4}$ բաժնի $\frac{1}{2}$ մասի ժառանգությունը:

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2014 թվականի մարտի 7-ի որոշմամբ Կարինե Հարությունյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ բեկանվել է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության

դատարանի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը և գործն ուղարկվել նոր քննության:

Գործի նոր քննության ընթացքում Կարինե Հարությունյանը պահանջել է՝ որպես ՀՀ Արարատի մարզի Նոր Խարբերդի Մորենիկի թիվ 8 հասցեում գտնվող կոլտնտեսային ծխի անդամի, ճանաչել իր սեփականության իրավունքը վերոհիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքի $\frac{1}{2}$ բաժնեմասի նկատմամբ, ամբողջությամբ անվավեր ճանաչել 1992 թվականի ապրիլի 9-ի՝ Վարսենիկ Մարտիրոսյանի անվամբ տրված ժառանգության իրավունքի թիվ 2-155 և սեփականության իրավունքի թիվ 2-155 վկայագրերը, որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել Վարսենիկ Մարտիրոսյանի և Հասմիկ Թարվերդյանի միջև 1993 թվականի հուլիսի 23-ին կնքված առուվաճառքի պայմանագիրը, անվավեր ճանաչել Հասմիկ Թարվերդյանի և Քրիստինե Իսրայելյանի միջև 2007 թվականի փետրվարի 26-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության թիվ 4477 պայմանագիրը և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 03-070-4-11 մատյանի 015 համարի տակ Քրիստինե Իսրայելյանի անվամբ 2011 թվականի սեպտեմբերի 28-ի՝ իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 14-ի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 20-ի որոշմամբ Քրիստինե Իսրայելյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է, ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2015 թվականի օգոստոսի 14-ի վճիռը բեկանվել է, և այն փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է Վճռաբեկ դատարանի՝ 20.01.2016թ. որոշմամբ:

Դիմողը մատնանշում է, որ առաջին ատյանի դատարանի պատճառաբանությունից բխում է, որ դիմումատուի պահանջը՝ որպես գույքի ծխի անդամի սեփականության իրավունքի ճանաչում, ուղղված է սեփականատիրոջ իրավունքի խախտման վերացմանը, հետևապես՝ այդ դեպքում հայցային վաղեմություն կիրառելի չէ, մինչդեռ ՀՀ վերաքննիչ դատարանի պատճառաբանությունից բխում է, որ սեփականության իրավունքի ճանաչման պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն կիրառելի է:

Ըստ դիմողի՝ մի շարք դատական ակտերից բխում է, որ դատարանները, օրենքի ուժով, սեփականության իրավունքի ճանաչման պահանջների նկատմամբ՝ հայցային վաղեմություն չկիրառելու մասով, ունեն հակասական իրավական պրակտիկա, քանի որ մի դեպքում՝ նույն պահանջի նկատմամբ դատարանը կիրառում է հայցային վաղեմություն, մեկ այլ դեպքում՝ ոչ: Վիճարկվող նորմում առկա չէ հստակ կարգավորում և պարզ չէ, թե «սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա» արտահայտության ներքո հայցային վաղեմություն կիրառելի չէ սեփականության իրավունքի ճանաչման ցանկացած պահանջի նկատմամբ, թե այն կիրառելի չէ միայն փաստացի տիրապետման հիմքով՝ ժառանգմամբ սեփականության իրավունք ճանաչելու դեպքերում: Այդ իրավական անորոշությունը հանգեցնում է անձի սեփականության իրավունքի խախտմանը:

հրավական անորոշության արդյունքում քաղաքացին չի կարողանում լիիրավ պաշտպանել իր խախտված իրավունքները:

Դիմողը գտնում է, որ ինքը, օրենքի ուժով ունենալով սեփականության իրավունք, զրկվել է դրանից՝ իրավակիրառ պրակտիկայում այդ նորմին տրված մեկնաբանության, ինչպես նաև այդ նորմի անորոշ լինելու պատճառով:

Սույն գործով ՀՀ սահմանադրական դատարանում գործի քննությունը նշանակված է 2018թ. սեպտեմբերի 11-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող դրույթների բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 277. Սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունը տիրապետումից զրկելու հետք չկապված խախտումներից

Սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետք:

Հոդված 344. Պահանջներ, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում

Հայցային վաղեմությունը չի տարածվում՝

... 4) սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ամեն մի խախտման վերացման պահանջների վրա, թեկուզև այդ խախտումները կապված չեն եղել տիրապետումից զրկելու հետք (հոդված 277).

Քննարկվող քաղաքացիաիրավական դրույթների սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է նախ քննարկման առարկա դարձնել հայցային վաղեմության ինստիտուտի դերն ու նշանակությունը, ինչպես նաև սեփականության և այլ գույքային իրավունքների պաշտպանության վերաբերյալ քաղաքացիաիրավական դրույթների բովանդակությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331-րդ հոդվածի համաձայն՝ Հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 16-րդ գլխի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված գլխում օրենսգրքով նախատեսվել է սեփականատիրոջ երեք հիմնական իրավունքները և դրանցից յուրաքանչյուրի պաշտպանության սեփականատիրոջ իրավունքը (իրավունքի պաշտպանության եղանակը): Դրանք են՝

ա) սեփականության իրավունքը ճանաչելը (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 273-րդ հոդված),

բ) տիրապետումից զրկելու հետ կապված խախտումներից պաշտպանվելու սեփականատիրոջ իրավունքը (վինդիկացիոն հայց) (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 274-րդ -276-րդ հոդվածներ),

գ) տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումներից պաշտպանվելու սեփականատիրոջ իրավունքը (նեգատոր հայց) (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվ.):

Ընդ որում, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածի, որն անմիջականորեն հղում է կատարում օրենսգրքի 277-րդ հոդվածին՝ տիրապետումից զրկելու հետ չկապված խախտումներից պաշտպանվելու սեփականատիրոջ իրավունքը (նեգատոր հայց) չի սահմանափակվում որևէ ժամկետով. այդպիսի պահանջների նկատմամբ հայցային վաղեմություն չի տարածվում, ի տարբերություն սեփականության իրավունքը ճանաչելու և տիրապետումից զրկելու հետ կապված խախտումները վերացնելու պահանջների (վինդիկացիոն հայց), որոնց նկատմամբ կիրառվում է հայցային վաղեմություն:

Կենտրոնը գտնում է, որ իրավական որոշակիության տեսանկյունից վերոնշյալ կարգավորումները կասկած չեն հարուցում: Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածում, որի համաձայն՝

Հոդված 79. Որոշակիության սկզբունքը

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:¹

Վերը նշված մեկնաբանություններից ելնելով, Կենտրոնը գտնում է, որ խնդրո առարկա օրենքում հստակ և որոշակի կերպով ձևակերպված են սեփականության իրավունքի պաշտպանության դեպքերում հայցային վաղեմության կիրառման իրավակարգավորումները: Ուստի, վիճարկվող օրենքը չի խախտում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը:

Իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելու հետ միաժամանակ՝ վիճարկվող դրույթները չեն առաջացնում նաև անձի սեփականության իրավունքի, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի խախտման վտանգ:

Ինչ վերաբերում է իրավակիրառ պրակտիկային, ապա՝ հարկ է նկատել, որ անհատական սահմանադրական դիմումում նշված դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննարկվող նորմերը կիրառվում են դրանց բուն իմաստին և նշանակությանը ոչ համապատասխան, հակասական մեկնաբանություններով և բովանդակությամբ, ինչը, սակայն, սույն գործի շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանի քննարկման առարկան լինել չի կարող, քանի որ օրենքի միատեսակ կիրառության իրավասությունը պատկանում է ՀՀ վճռաբեկ դատարանին:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է բացառապես նեգատոր հայցերի դեպքում հայցային վաղեմության չկիրառման խնդրին: Մասնավորապես, 18.07.2014 թիվ ԵԿԴ/0181/02/13 որոշման մեջ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է.

«Եթե օրենսդրի կամքն ուղղված լիներ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի բոլոր տեսակի խախտումների վերացման պահանջների վրա հայցային վաղեմությունը չտարածելուն, ապա քննարկվող հոդվածում այլևս անհրաժեշտություն չէր լինի հատուկ մատնանշելու տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների մասին, այլ ուղղակի կարող էր սահմանվել, որ սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի իրավունքի ցանկացած խախտման վերացման պահանջների նկատմամբ հայցային վաղեմությունը չի տարածվում: Մինչդեռ քննարկվող հոդվածը նման կարգավորում չի նախատեսել, հետևաբար սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ կապված իրավունքի խախտումների վերացման պահանջների (վինդիկացիոն հայցերի) նկատմամբ հայցային վաղեմությունը տարածվում է, իսկ քննարկվող նորմի համաձայն՝ հայցային վաղեմությունը չի տարածվում միայն սեփականատիրոջ կամ այլ տիրապետողի՝ տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումների վերացման պահանջների վրա: Նման իրավակարգավորումը պայմանավորված է նեգատոր հայցի

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

առանձնահատկություններով: Մասնավորապես՝ նեգատոր հայցը գույքի սեփականատիրոջ կողմից արտապայմանագրային հարաբերություններից բխող սեփականության իրավունքի պաշտպանության միջոց է, որն ուղղված է սեփականատիրոջ կողմից գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքների իրացման խոչընդոտների վերացմանը: Ընդ որում, գույքի տիրապետումից զրկելու հետ չկապված իրավունքի խախտումները, որպես կանոն, տևական և շարունակական են, ինչն էլ պայմանավորել է սեփականության իրավունքի պաշտպանության այս միջոցի նկատմամբ հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման բացառումը: Այսինքն՝ եթե սեփականատերը կամ այլ տիրապետողը ինչ-որ ժամանակահատվածում չի պահանջել նման խախտումների վերացում, ապա դա դեռևս հիմք չէ, որպեսզի նա հետագայում ևս զրկվի այդ խախտումներից պաշտպանվելու հնարավորությունից»:

Այսպիսով, կարծում ենք՝ իրավունքի միատեսակ կիրառության տեսանկյունից ևս խնդիրը համապարփակ կարգավորում է ստացել նաև ՀՀ վճարելի դատարանի նախադեպային որոշումների մակարդակով: Ուստի, այս իմաստով ևս սահմանադրական դատարանում քննության ենթակա իրավակիրառական պրակտիկայի հակասահմանադրականության խնդիր առկա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 277-րդ հոդվածի, 344-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը խնդրահարույց չէ:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան